ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Մ.Խորենացու 3,7 հասցեում, ստորև ներկայացնում է 6641 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2016թ-ի օգոստոսի 9-ին կնքված պայմանագրում 2018թ-ի ապրիլի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: 2018թ-ին մատուցվելիք ծառայության դիմաց նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 18.04.2018թ-ին կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ 09.08.2016-ին կնքված թիվ 6641 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածվել են 2018թ-ի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար 2018թ-ի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սպարտակ Հարությունյանին:

Հեռախոս՝ 060 544 703:

Էլ. փոստ՝ spartakharutyunyan76@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

09.08.2016թ. կնքված և սեղանամատյանում թիվ 6641 համարով գրանցված գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ՀՀ քաղաք Երևան « 18 » ապրիլի 2018թ.

ՀՀ Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս քաղաքապետ Տարոն Մարգարյանի, ում անունից ըստ 29.03.2018թ. տրված թիվ 01/7-17382h լիազորագրի հանդես է գալիս Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Դավիթ Գրիգորյանը/ծնված՝ 10.09.1972թ., նույնականացման քարտ՝ 006650055, տրված՝ 14.07.2015թ 009-ի կողմից, / այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ», մի կողմից և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար Արթուր Լևոնի Եղիազարյանը /ծնված 21.02.1994թ., նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ., 005 ի կողմից /այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.08.2016թ. կնքված և սեղանամատյանում թիվ 6641 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 3.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով ՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել 2018թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2018թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս /4/ հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

«ՎԱՐՁԱԿԱԼ»	«ՎԱՐՁԱՏՈՒ»
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	**Երևանի քաղաքապետարան**
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7	**ք. Երևան, Արգիշտի փող. 1**
ՀՎՀՀ 02647057	**Կենտրոնական գանձապետարան**
Հ/Հ 900011054013	**ՀՎՀՀ 02593108**
Կենտրոնական գանձապետարան	**Հ/Հ 900025311532**
Գործառնական վարչություն	**Էրեբունի վարչական շրջանի ղեկավար**
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյանի, նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ. 005-ի կողմից	
Ա. Եղիազարյան	**Դ.Գրիգորյան**

Գրական ակտի կոդ: 520-20180418-117-2445009
Նոտարական ակտի գաղտնագիր: JXP12G

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՏԱՍՆՈՒԹԻՆ

սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից:
Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ ---------- 4603 ---------- ով

Գանձված է պետական տուրք՝ երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Էլմիրա Գևորգի Դանիելյան

Հավելված 1
09.08.2016թ կնքված և սեղանամատյանում թիվ 6641 համարով գրանցված
անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ
կատարելու նասին թիվ 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
	Ծառայության անվանումը	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ք. Երևան, Սասունցի Դավթի փող. թիվ 87 և 87ա հասցեում գտնվող 381.92 քմ. վարչական շենքի տարածքի վարձակալություն	1 599 300	2 132 400	2 665 500	3 198 600	3 731 700	4 264 800	4 797 900	5 331 000	6 397 200	6 397 200

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամողական կարգով*

«ՎԱՐՁԱԿԱԼ»

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ
Սահակյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյանի,
նույնականացման քարտ 006196521, տրված
17.07.2017թ. 005-ի կողմից**

---------- **Ա. Եղիազարյան**
(ստորագրություն)

Արթուր Եղիազարյան

«ՎԱՐՁԱՏՈՒ»

**Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900025311532
Էրեբունի վարչական շրջանի ղեկավար**

---------- **Դ.Գրիգորյան**
(ստորագրություն)